

## ԵՎՐՈՊԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ (ՉԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ)<sup>1</sup>

*Գիա Նոդիա<sup>2</sup>*

Այս գրառումները «Եվրոպականացում և հակամարտության լուծում» գրքի վերաբերյալ գրված նախորդ հոդվածների արձագանքն են մի հեղինակի տեսանկյունից, որն իր կյանքի մեծ մասն անցկացրել է Վրաստանում, սակայն բավականին երկար ժամանակ ապրել և հետազոտական աշխատանքներ է վարել Բրյուսելում<sup>3</sup>: Չնայած հեղինակների առաջարկած վիճելի և հայեցակարգային մտքերն ինձ համար ծառայում են որպես շարժակետ, այս գրառումներն ավելի շուտ արտահայտում են եվրոպականացման և հակամարտության լուծման համընդհանուր քննարկման վերաբերյալ անձնական խորհրդածությունները, քան մեկնաբանում են գրքում արծարծված որոշ խնդիրներ: Գրքում քննարկված չորս կետերից բացի, ես նաև կանդիդատնամ Հարավային Օսիայի հարցին, որը շատ հրատապ էր հոդվածը գրելու ժամանակ:

### *Ինչպիսի՞ հակամարտություններ*

Նախևառաջ ես կփորձեմ սահմանել, թե ինչ հատուկ նշանակություն ունի հակամարտություն բառը այս քննարկման մեջ, քանի որ այն սահմանումը, որ ես կօգտագործեմ, տարբերվում է գրքի հեղինակների կիրառած սահմանումից: Ըստ գրքում արծարծված չորս դեպքերի՝ միջազգայնորեն ճանաչված երկրները կարող են բռնի ուժով մասնատվել: Եթե

<sup>1</sup> *Ghia Nodia, Europeanization and (not) resolving secessionist conflicts (U. E.):* Ներկա հոդվածը առաջին անգամ հրատարակվել է «Էթնոքաղաքականությունը և ազգային փոքրամասնությունների հարցերը Եվրոպայում» հանդիսի («*Journal of Ethnopolitics and Minority Issues in Europe*») հատուկ թողարկման մեջ (№ 1, 2004)՝ որպես լրացուցիչ մեկնաբանություն Բրունո Կոպիետերսի, Մայքլ Էմերսոնի, Միշել Հայսենի, Թամարա Կովզիրիձեի, Գերգանա Նուչեվայի, Նատալի Տոչիի և Մարիուս Վահլի հեղինակած «Եվրոպականացում և հակամարտության կարգավորումը. կոնկրետ դեպքի ուսումնասիրություն եվրոպական ծայրամասից» աշխատության:

<sup>2</sup> Գիա Նոդիան Թբիլիսիի Խաղաղության, Ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտի (*Caucasus Institute for Peace, Democracy and Development, CIPDD*) խորհրդի նախագահն է և քաղաքագիտության պրոֆեսոր Իլյա Ճավճավաձեի անվան լեզվի և մշակույթի համալսարանում (*Ilya Chavchavadze University of Language and Culture*): Նա «Ժողովրդավարություն» հանդեսի (*Journal of Democracy*) խմբագրական խորհրդի անդամ է, որտեղ 2002թ. հրատարակվեց նրա «*Debating the Transition Paradigm: The Democratic Path*» («Քննարկում անցումային պարադիգմաների շուրջ. ժողովրդավարական ուղի») հոդվածը:

<sup>3</sup> 2004թ. ապրիլից մինչև սեպտեմբեր ես (*իմա՝ Գիա Նոդիան՝ U. E.*) աշխատել եմ *International Francqui Chair at the Vrije Universiteit Brussel*-ում:

«հակամարտությունը» հենց սա է, ապա երկրի ամբողջականությունը պահպանելու հարցում որևէ համաձայնության գալը կամ խաղաղ ու հանգիստ ձևով այն մասնատելը նույնպես «լուծում» է ներկայացնում:

Այնուամենայնիվ, գրքում քննարկվում են երկու որակապես տարբեր կոնֆլիկտային իրավիճակներ. երեք դեպքերում էլ՝ Գիպրոս, Մերձդնեստր և Աբխազիա, ստեղծված վիճակը մենք հաճախ անվանում ենք «սառեցված հակամարտություն»: Սրանք այն դեպքերն են, որտեղ համեմատաբար վերջերս անջատման շուրջ զինված հակամարտություն է ծավալվել: Այստեղ անջատողական կողմերը ռազմական հաջողություններ ունեցան, կոնկրետ տարածքների վրա սահմանեցին արդյունավետ վերահսկողություն և ստեղծեցին փաստացի պետական հաստատություններ: Այնուամենայնիվ, հակամարտությանն այսպիսի ռազմական լուծում տալը չի ընդունվում ո՛չ ռազմական կորուստներ կրած կենտրոնական կառավարության, ո՛չ էլ միջազգային հանրության կողմից, այդ պատճառով հակամարտությունները լուծված չեն համարվում: «Սառեցված հակամարտություն» տերմինը հաճախ քննադատության է արժանանում, քանի որ ոչ մի գործընթաց ամբողջովին սառեցված չէ. հակամարտության շրջաններում առկա մի քանի կարևոր գործընթացներ ներառում են նաև բռնության կիրառման դեպքեր: Այնուամենայնիվ, ես դեռևս արդարացնում եմ այդ հասկացության գոյությունը, քանի դեռ բոլոր ներգրավված կողմերը համաձայն են խնդիրներ չհարուցել վերջին զինադադարից հետո ձևավորված ռազմաքաղաքական վերահսկողության կարգին («*regime*»)՝ առանց վերջինս լեգիտիմ համարելու: Բռնության հազվադեպ դեպքերը, եթե անգամ դրանք հանդիպում էլ են, ապա սպառնալիք չեն ներկայացնում *status quo*-ի համար: Ես նաև կօգտագործեմ «հետբախումնային հակամարտություն» («*post-violent conflict*») տերմինը:

Գրքում վերլուծության ենթարկված Սերբիա-Մոնտենեգրոյին վերաբերող չորրորդ կետում չի եղել զինված հակամարտության փուլ, և բռնությամբ հարցը լուծելու սպասվող որևիցե սպառնալիք գոյություն չունի: Այնուամենայնիվ, գոյություն ունեւ չարավալալիայի ծայրամասից Մոնտենեգրոյի, ինչպես այս պետությունը հետագայում կոչվեց, միակողմանի անջատման հիպոթետիկ մի սցենար, որը կտաներ քաղաքացիական մեկ այլ պատերազմի: Այս դեպքում Եվրամիությունն ավելի շատ փորձում էր կանխել հնարավոր հակամարտությունը, քան լուծել արդեն գոյություն ունեցողը:

Հնարավոր է, որ հեղինակները լուրջ պատճառներ ունեին «հակամարտության լուծում» տերմինը առավել ընդգրկուն կերպով մեկնաբանելու համար՝ ներառելով նաև հակամարտության կանխման խնդիրները: Այնուամենայնիվ, ես կարծում եմ, որ այս տերմինի ավելի սեղմ սահմանումն այստեղ ավելի մեծ գործնական արժեք կունենա: Հետբախումնային հա-

կամարտությունների ժամանակ միջազգային հանրությունը սովորաբար փորձում է պատերազմին խաղաղ լուծում տալ՝ միննույն ժամանակ որոշ իմաստով նաև օրինական համարելով ռազմական գործողությունների արդյունքում առաջացած հետևանքները: Անջատված կողմերից պահանջում են հրաժարվել արյամբ և զոհերով ձեռք բերված (անկախություն ձեռք բերելու մի շատ ավանդական ձև) «լրիվ արժանի անկախությունից»: Այնուհետև միջազգային հանրությունը փորձում է չեղյալ համարել էթնիկ գտումների գործընթացների արդյունքներն՝ այն դեպքում, երբ անջատողական տարածքներում սա լավ ճանապարհ է համարվում «հինգերորդ շարասյունից» ազատվելու համար: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ «միջազգային հանրությունը» կհսում է ճանաչված պետությունների տեսակետները: Միջազգային հանրության կողմից առաջ քաշված իրական բանաձևը առաջարկում է բարի համբավը փրկելու ճանապարհներ՝ տարածքային ամբողջականության սկզբունքների ֆորմալ հաստատումը ռազմական պարտության ընդունելի արդյունքների հետ միասին: Սա նշանակում է, որ պատերազմի արդյունքները խաղաղ ճանապարհով չեղյալ համարելու համար հարկավոր է որոշ չափով օրինականացնել դրանք:

«Ընդհանուր պետությունների» («*common state*») կամ ավելի թույլ դաշնությունների գաղափարները՝ կենտրոնական կառավարության կողմից անջատողական միավորի վրա առանց որևէ զգալի վերահսկողություն սահմանելու, կարող են դառնալ հակամարտության հնարավոր լուծումներից մեկը: Այսպիսի բանաձևերը նույնիսկ վայելում են հակամարտությունը կանխող որոշ քաղաքական ուղղությունների աջակցությունը, ինչպես, օրինակ, Եվրամիության վարած քաղաքականությունը Մերքիայի և Մոնտենեգրոյի հարցում: Սակայն այսպիսի դեպքերում արտաքին միջամտությունը հարցի լուծման ավելի քիչ խոչընդոտներ կհարուցի, բայց և միաժամանակ անարդարության ավելի քիչ դեպքեր կուղղվեն: Արդյունքում՝ ավելի մեծ կլինեն հաջողության հասնելու հնարավորությունները:

### ***Պայմանականություն և սոցիալիզացիա***

Գրքի առաջին գլխում «Եվրոպականացումը» նկարագրվում է «որպես մի գործընթաց, որն ակտիվացվում և խրախուսվում է Եվրոպական հաստատությունների, գլխավորապես՝ Եվրամիության կողմից՝ հակամարտության վերջնական արդյունքները հանգեցնելով Եվրոպական կառույցների մեջ ներգրավված կողմերի ինտեգրացիայի որոշակի աստիճանի»: Իսկ եթե ավելի պարզ խոսենք՝ Եվրոպական հաստատություններին և, առաջին հերթին, Եվրամիությանն անդամակցելու հեռանկարը ենթադրում է հակամարտության մեջ ներգրավված քաղաքական գործիչների գործելակերպի և վերաբերմունքի այնպիսի փոփոխություն, որը կհեշտացնի խնդրի լուծումը: Իրականում այս հաստատություններն անջատված

կողմերին մի այնպիսի ինստիտուցիոնալ հենք են առաջարկում, որը կհեշտացնի նրանց գործը ինքնիշխանության վերաբերյալ հարցերի շուրջ փոխզիջման գնալու ժամանակ: Այս ուղղությամբ կատարվող փոփոխություններին կարելի է հասնել երկու մեխանիզմների միջոցով. պայմանականություն՝ հակամարտության մեջ գտնվող կողմերին ուղղված որոշակի քաղաքական գործողություններ ձեռնարկելու պահանջներ՝ հատուկ շահ ներկայացնող փոխզիջումների փոխարեն, ինչպես, օրինակ, որոշակի առաջընթաց դեպի Եվրամիություն մուտքը հարթող ճանապարհին, և սոցիալիզացիա, որը եվրոպական գործիչների հետ սերտ շփման մեջ գտնվելու և եվրոպականացված հաստատություններ ստեղծելու արդյունքում «Եվրոպական արժեքները» և եվրոպական գործելաոճը ներմուծելու փոքր-ինչ ավելի անորոշ (չնայած ոչ պակաս կարևոր) գործընթաց է:

Թվում է, թե ակնհայտ է, որ թեկնածու և ոչ թեկնածու երկրների վրա Եվրամիության ազդեցության տարբերությունը պետք է բավականին պարզորոշ լինի, քանի որ Եվրամիությունը չի կարող օգտագործել ոչ թեկնածու երկրների անդամության պայմանականությունը: Մյուս կողմից՝ ինչ վերաբերում է սոցիալիզացիայի հայեցակարգին, ապա տարբերությունը շատ մեծ է. նույնիսկ Եվրոպայի և իր պերիֆերիայի գործիչների միջև թեթև փոխազդեցությունը (ինչպես, օրինակ, Եվրոպայի խորհրդի կամ Եվրամիության հարևանության քաղաքականության միջոցով) կարող է արդյունավետ լինել:

Թեկնածու և ոչ թեկնածու երկրների միջև մի շատ ավելի մեծ տարբերություն կա, որը հատկապես կարևոր է Մոլդովայի և Վրաստանի դեպքերում<sup>1</sup>: Երբ հերթը հասնում է անդամություն տալու խոստումներին, որը կապված է պայմանականության մեխանիզմի հետ, Եվրամիությունը գրավում է վարորդի տեղը. խոսքը «մի գործընթացի մասին է, որն ակտիվացվել և քաջալերվել է եվրոպական կառույցների կողմից»: Եվրամիությունն է որոշում՝ արդյոք կոնկրետ երկիրը կարող է համարվել Եվրամիության թեկնածու երկիր, թե ոչ և ինչ ձևով պետք է օգտագործել պայմանականությունն այս դեպքում: Բայց երբ հերթը հասնում է «սոցիալիզացիային», այն չի գործում: Թեկնածու երկրների կողմից լիովին յուրացված «*acquis communautaire*» (ֆր.՝ «ընդհանուր ձեռքբերումներ»- Մ. Ե.) ունենալու պահանջները չեն գործում ոչ թեկնածու երկրների դեպքում: Ամենակարևորը՝ Եվրամիությանը չի պատկանում եվրոպական ինքնությունն ու եվրոպական արժեքները սահմանելու հեղինակային իրավունքը: Ո՛չ էլ Եվրամիությունը կարող է վերահսկել ուրիշ երկրների ազգային ինքնու-

<sup>1</sup> Պայմանականությունը կարող է նաև առնչվել այլ շահերի հետ, ինչպիսիք են՝ աջակցության ծրագրերը, առևտրային քաղաքականությունները կամ որոշակի խնդիրներին վերաբերող քաղաքական աջակցությունը: Մակայն այս խրախուսանքները շատ ավելի թույլ են թեկնածու երկրների համար:

թյունը: Ոչ թեկնածու երկրները կարող են Եվրամիության անդամի կոչում ստանալու պահանջ ներկայացնել, եթե նույնիսկ Եվրամիությունը այլ կերպ է մտածում:

Չնայած Եվրամիությունը Վրաստանի և Մոլդովայի նման երկրներին մերժում է դասել թեկնածու երկրների շարքին (մերժման քաղաքական մի ձև է Եվրոպայի հարևանության ռազմավարության մեջ նրանց ընդգրկելը, եթե նույնիսկ այս քաղաքականության մեջ դա այնքան էլ պարզ չի երևում), այն նրանց չի կարող արգելել ձգտել դեպի Եվրոպա՝ միավորվել նրա հետ: Երկու երկրներն էլ իրենց Եվրամիության թեկնածու երկիր են համարում ավելի լայն՝ ոչ պաշտոնական իմաստով: Այսինքն՝ այս երկրները (կամ նրանց կառավարությունները) ինքնապարտադրված միակողմանի եվրոպականացվում են, որպեսզի Եվրամիությանը համոզեն փոխել դիրքորոշումները և ճանաչել այս երկրների հակումը դեպի Եվրոպա: Այս երկրներում եվրոպականացումը կարող է համարվել տեղերում ընդունված գործընթաց, որն այնուհետև պարադոքսային կերպով և՛ քաջալերվում, և՛ վիատեցվում է Եվրամիության կողմից. «Ուղղունում ենք եվրոպականացվելու ձեր ցանկությունը, բայց խնդրում ենք հույսեր չփայփայեք, թե կպարզևատրվեք Եվրամիության անդամության կոչումով»: Եվրամիության հարևանության քաղաքականությունը նույնիսկ կարող է ստեղծել հատուկ մեխանիզմներ (ինչպես, օրինակ, անհատական գործողության ծրագրերը), որպեսզի Եվրամիությունը մոնիթորինգի ենթարկի, գնահատի և քաջալերի այս երկրների՝ «եվրոպականացման» համար կատարած կոնկրետ քայլերը:

### ***Ինչո՞ւ Եվրամիությունը չի կարող լուծել***

#### ***Էթնոտարածքային հակամարտությունները***

Տարբեր մեխանիզմներ ունենալուց բացի, Եվրամիության ազդեցությունը կարող է ունենալ նաև այլ հետևանքներ: Առավելագույնս այն կարող է ձգտել հակամարտություններին լուծում տալ վերը նշված ոգով: Այդ ազդեցությունը կարող է լինել նաև սակավ փառասիրական. եթե նույնիսկ կողմերին չհաջողվի լուծել հակամարտությունը, նրանք դեռևս կարող են փոխել իրենց վերաբերմունքն ու գործելատճը հակամարտող մյուս կողմի և այդ ամենի հիմքում ընկած տարաձայնությունների նկատմամբ: Վերջինս սովորաբար արտահայտվում է ավելի ընդհանուր և անորոշ տերմինով՝ «հակամարտության ձևափոխություն» (*«conflict transformation»*):

Եվրամիությունը բացեիբաց ձգտում էր իր ազդեցությունը պարտադրել Կիպրոսի հակամարտության ընթացիկ կարգավորման հարցում: Այժմ մենք գիտենք, որ դա ձախողվեց: Փորձնական հետազոտությունների չափանիշները մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ Եվրամիությունն այնքան էլ լավ չի կարողանում լուծում տալ հակամարտություն-

ներին՝ ելնելով միայն այս եզակի օրինակից: Սակայն դա կարող է օգտագործվել առավել ընդհանուր փաստարկները մեկնաբանելու համար:

Շատ հնարավոր է, որ Եվրամիությունը պատմության մեջ երբևիցե ստեղծված՝ խաղաղություն հաստատող և հակամարտություն լուծող ամենաարդյունավետ մեխանիզմն է: Այս առումով վերջին հիսուն տարվա համեմատությունը Եվրոպայի նախորդ դարերի պատմության հետ վկայում է տպավորիչ հաջողությունների մասին: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ այն պետք է հաջողությամբ լուծի հակամարտությունը: Իրականում, տարբերությունը անվտանգության կոշտ և փափուկ խնդիրների («*hard and soft security issues*») մեջ է: Նախորդը ներառում է ռազմական բախում կամ դրանից բխող ուղղակի սպառնալիք: Փափուկ անվտանգության մեխանիզմները ստեղծում են հասարակական և ինստիտուցիոնալ շրջանակներ, որոնք կանխում են հակամարտության մուտքը ռազմական բախումների փուլ: Սահմանների և տարածքային վերահսկողության հարցերն ավանդաբար կոշտ անվտանգության հարցեր են: Դրանց վերաբերող հակամարտությունները բերում են ռազմական բախման կամ ուժով ետ են պահվում: Սակայն փափուկ անվտանգության քաղաքականությունը թույլ չի տալիս բացեիբաց մարտահրավեր նետել տարածքների նկատմամբ գոյություն ունեցող ռազմաքաղաքական վերահսկողության կարգերին:

Պատմականորեն Եվրամիությունն ավելի շատ կոշտ անվտանգության սպառող է, քան մատակարար<sup>1</sup>: Չնայած Եվրամիության դիրքերն ամրապնդող փիլիսոփայական գաղափարներն ու արժեքները բավականին հին են, այս նախագիծն իրագործելի դարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում Արևմտյան Եվրոպայում երևան եկած հատուկ անվտանգության համակարգի ազդեցության ներքո. այդ ժամանակ մայրցամաքային Եվրոպան գտնվում էր արտաքին ուժերի ռազմական գերիշխանության ներքո՝ անգլո-սաքսոնական ուժերն Արևմուտքից և կոմունիստական Ռուսաստանն Արևելքից: Այս ուժերը վճռեցին կոշտ անվտանգությանը վերաբերող բոլոր հարցերը, այն է՝ ինչպես տարածքները պետք է բաժանվեն Եվրոպական պետությունների միջև: Նրանք Ֆրանսիան կոռուպցիայի ենթարկեցին ավելի շատ քաղաքական, քան ռազմական պատճառներից ելնելով, որպեսզի հետպատերազմյան տարածքային կարգավորման մեջ մայրցամաքային Եվրոպացիներն ունենային ավելի մեծ մասնաբաժին: Շուտով ի հայտ եկան ՆԱՏՕ-ն և Վարշավյան պակտը՝ որպես կոշտ անվտանգության կազմակերպություններ, որ այն ժամանակ պահպանում էին այդ կարգը (սահմանելով «սահմանների անխախտելիության»

<sup>1</sup> Ռոբերտ Կագանը (*Robert Kagan*) սրա վերաբերյալ հետաքրքիր վերլուծություններ է կատարել իր «*Of Paradise and Power. America vs Europe in the New World*» («Դրախտի և ուժի մասին: Ամերիկյան ընդդեմ Եվրոպայի նոր աշխարհում») նյութերում (*New York: Knoph*), 2003:

սրբազան սկզբունքը): Մասնավորապես, ՆԱՏՕ-ն Արևմտյան Եվրոպան չէր պաշտպանում միայն կոմունիզմից: Այն նաև կանխում էր հակամարտություններն արևմտաեվրոպական երկրների միջև՝ առաջնորդվելով այն հայտնի ասացվածքով, որ ռուսներին պետք է դրսում պահել, ամերիկացիներին՝ ներսում, իսկ գերմանացիներին՝ ներքևում: Վարչավյան պակտը, իր հերթին, իրականացնում էր նմանատիպ մի գործառնություն աշխարհի իր մասում:

Եվրամիությունը ստեղծվեց այս կոշտ անվտանգության կարգի հարկադիր ընդունումից հետո: Այն նախագծվել էր որպես վստահություն ներշնչող մշտական մի մեխանիզմ, որը նպատակ ուներ հարկադրել արևմտյան եվրոպացիներին ընդունել և հարատև դարձնել ոչ կոմունիստական Եվրոպայում առկա հետպատերազմյան քաղաքական կարգը, որպեսզի այն հետզհետե թուլացնի իր կախվածությունը անգլո-սաքսոնական ռազմական ներկայությունից: Այս նպատակին հասնելու միջոցներն անուղղակի էին (այս անուղղակիությունը կարող էր դառնալ եվրոպական կենսափորձի տարբերանշանը՝ ի հակադրություն «պարզեցված» ամերիկյան կամ անգլո-սաքսոնական շիտակության): Հետպատերազմյան սահմանները Եվրոպայում ընդունելի չէին, ոչ թե որովհետև դրանք «լավն» էին կամ «արդար» (նույնիսկ պարտված գերմանացիները դժվար թե կարողանային համաձայնել դրա հետ), այլ որովհետև միավորված Եվրոպայում բոլոր սահմանները պետք է դառնային անէական (գոնե ավելի քիչ կարևոր): Ազգ-պետությունների և նրանց միջև առկա սահմանների կարևորության նվազումը պայմանավորված էր ազատ առևտրի (գոնե Եվրամիության ներսում) և ժողովրդավարության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ ստանձնած պարտավորություններով:

Նման մի բան ծրագրված էր իրականացնել Եվրոպայի արևելյան հատվածում. Ենթադրվում էր, որ Խորհրդային Միությունը, Վարչավյան պակտը, Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ) կոմունիստական գաղափարախոսության աջակցությամբ պետք է աշխարհի այս մասում ապրող մարդկանց ստիպեին ընդունել ստալինյան վարչակարգի կողմից հարկադրված և Յալթայի պայմանագրով հաստատված քաղաքական ու անվտանգության համակարգը: Սակայն պարզվեց, որ կոմունիստական գաղափարախոսությունը լեգիտիմացման սակավարդյունավետ գործոն է, քան արևմտյան ժողովրդավարական գաղափարախոսությունները, և դրա հետ կապված ճգնաժամը պայթեցրեց ողջ արևելաեվրոպական համակարգը: Այն չթողեց ո՛չ փափուկ, ո՛չ էլ կոշտ անվտանգության մեխանիզմներ, որպեսզի ազգերն ընդունեն տարածքային-քաղաքական վերահսկողության կարգերը: Արդյունքում՝ նրանք այս վարչակարգերն անարդարացի համարեցին: Այդ ժամանակահատվածում ստեղծված անվտանգության վակուումի մթնոլորտում էլ գլուխ բարձրացրին մի շարք տարածքային հակամարտություններ (որոնք Արևմուտքում սովորաբար անվան-

վում են «Էթնիկ հակամարտություններ»): Նման հակամարտություններն այդքան էլ շատ չծագեցին՝ միայն շնորհիվ այն մարդկանց զսպվածության և առողջ դատողության, որոնք նոր քաղաքական կարգեր ստեղծեցին կոմունիզմի բեկորների վրա. այդ պայմաններում *status quo*-ին ուղղված յուրաքանչյուր արմատական փոփոխություն կարող էր վատագույն հետևանքներ ունենալ:

Արևմուտքի բնակիչները հաճախ բալկանյան և կովկասյան հակամարտությունների հիմքում «հետամնացություն» և «բարբարոսություն» են տեսնում: Հակամարտող կողմերը շատ բաներով համապատասխանում են այս բնորոշմանը: Սակայն հետամնաց ասելով՝ այստեղ ամենևին էլ նկատի չունեն վերելք ապրող բազմաթիվ սպանությունները, կողոպուտն ու բռնությունները, որոնցում ներգրավված են կիսակառավարական հետկոմունիստական զորամիավորումները: Եվրոպացիները հաճախ են ենթադրել, որ տարածքային վերահսկողության, ինքնիշխանության և պետականության մասին անգամ մտահոգություններն անհույս «հետամնացության» նշաններ են:

Սակայն եթե ազգ-պետության կարևորությունը Եվրոպայում իրոք ստորադասված մի բան է համարվում, ապա եվրոպացիները հակված են կարևորություն չտալ, թե ինչպես և ինչու դա տեղի ունեցավ: Սա մտավոր անսպասելի փոփոխության արդյունք չէ: Եվրոպայի սեփական փորձից կարելի է մի բան սովորել, այն է՝ նախքան ժամանակակից հասարակության անդամները կկարողանան սովորել ազգային ինքնիշխանություններին կամ առավել ապահով զգալ դրանց ներքո, նրանք պետք է հետևում թողնեն տարածքային վերահսկողության կոշտ անվտանգության խնդիրները: Կարևորը հերթականությունն է: Ավաղ, կոշտ անվտանգության խնդիրները սովորաբար լուծվում են ավելի ավանդական մեթոդներով, որը պահանջում է ռազմական միջամտություն: Սա նշանակում է, որ հակամարտության երկու կողմերին պետք է թույլ տալ իրար մեջ պայքարելով՝ կոիվը հասցնել տրամաբանական ավարտին (այն դեպքում, երբ «քաղաքակիրթ աշխարհը» հեռուստացույցով կղիտի բազմաթիվ անախորժ տեսարաններ և, որ ավելի վատ է՝ օթևան կտա փախստականների հոսքին), կամ արտաքին կայսերական իշխանությունը հակամարտության մեջ խառնվելով՝ ուժով կստիպի ընդունել իր համար ընդունելի տարբերակը:

Բալկանների և Կիպրոսի օրինակների համեմատությունը հաստատում է այս բնորոշ գիծը: Եվրամիությունը փորձեց խառնվել նախկին Հարավսլավիայի հակամարտության լուծմանը, սակայն չհասավ որևիցե դրական արդյունքների: ՆԱՏՕ-ն ստիպված էր խառնվել և ռազմական ուժով փոխել ստեղծված իրավիճակը: Իրականում, ՆԱՏՕ միջամտությունը չլուծեց ամենաէական խնդիրները, այն է՝ ստեղծել կենսունակ երկիր Բոսնիայում կամ լուծել Կոսովոյի միջազգային կարգավիճակի հարցը: Սակայն ՆԱՏՕ-ն, այնուամենայ-



նիվ, ստիպեց ընդունել անվտանգության մի նոր կարգ՝ կտրուկ փոխելով ուժերի տարածքային հավասարակշռությունը և տեղի քաղաքական գործիչների համար ստեղծելով խրախուսանքների նոր համակարգ: Միայն այս միջամտության շնորհիվ Եվրամիությունը կարողացավ Բալկաններում դառնալ ազդեցիկ քաղաքական միավոր: Այս գործընթացը կրկնեց հենց Եվրամիության ստեղծման պատմությունը. սկզբում ՆԱՏՕ-ն ստեղծեց անվտանգության մի վահան, որը Եվրամիությանը թույլ էր տալիս քայլել դրա տակով և սկսել իր խաղաղության գործընթացը: Կիպրոսում ամենևին այլ բան տեղի ունեցավ. ՆԱՏՕ-ն չէր կարող գործել, եթե հակամարտությունը միայն ՆԱՏՕ անդամների միջև չէր, և չկար մեկ այլ կոշտ անվտանգության ներկայացուցիչ, որը կկարողանար դրսից լուծում թելադրել: Փոխարենը՝ Եվրամիությունն օգտագործեց փափուկ անվտանգության քաղաքականության մի ամբողջ զինանոց, ներառյալ ամենաուժեղ միջոցը, որը նա իրեն կարող էր թույլ տալ՝ Եվրամիության անդամությունը: Մինչդեռ այն այդպես էլ չգործեց:

Դա մեզ բերում է Եվրամիությանը վերաբերող, հավանաբար, ամենաեական խնդրին, այն է՝ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությանը (*Common Foreign and Security Policy, CFSP*): Ոմանք կարող են պնդել, որ հակամարտություններին լուծում տալու Եվրամիության ջանքերի ձախողումը միայն նշանակում է, թե Եվրամիությունը պետք է ավելի շատ աշխատի արտաքին և անվտանգության քաղաքականության միջոցների վրա: Շատ հնարավոր է, որ դա ճիշտ է, սակայն թերահավատության համար կան նաև շատ լուրջ պատճառներ: Եվրամիության փիլիսոփայության հիմքում ընկած է ուժի վրա հիմնված քաղաքականություններն անպետք դարձնելը: Նրա ամենամեծ նվաճումն իր սեփական անդամների մեջ այդ փիլիսոփայության կիրառումն է: Եթե նույնիսկ Եվրամիությունը երբևիցե ունեցել է արդյունավետ արտաքին քաղաքականություն, ապա դա իր նմանությամբ մյուս (թեկնածու) երկրներին փոփոխելն է եղել: Եվրամիության նոր արտաքին քաղաքականության նպատակն է շրջապատը դարձնել իր նման՝ առանց իր մեջ ներառելու: Ավանդության համաձայն, արտաքին և անվտանգության քաղաքականությունները ուժի վրա են հիմնված, և դա կշարունակվի այնքան ժամանակ, մինչև ամբողջ աշխարհը չդառնա Եվրամիության կրկնօրինակը: Այս իմաստով Եվրամիության արտաքին և անվտանգության քաղաքականությունները կարող են լինել *contradiction in adjecto* (լատ.՝ *հակասություն սահմանման մեջ*- Մ. Ե.):

### **Եվրամիությունը և հակամարտությունների ձևափոխությունը**

Սա Եվրամիությանն ուղղված քննադատություն չէ. նա ինքն էլ ամենևին տրամադրված չէր զբաղվել հակամարտության լուծման խնդիրներով, և Բալկաններում ու Կիպրոս-

սում ունեցած փորձը հավանաբար ավելի կուժեղացնի այս հակակրանքը: Ըստ Եվրամիության վարած քաղաքականության՝ այն երկրները, որոնք ցանկանում են դառնալ Եվրամիության անդամ, նախևառաջ պետք է լուծեն նմանատիպ հակամարտությունները: Կիպրոսի դեպքում, Հունաստանի ուժեղ քաղաքական ճնշման ներքո, Եվրամիությունը ստիպված էր շեղվել ընդհանուր կանոնից: Հունաստանը պարզապես սպառնաց վետո դնել դեպի նախկին կոմունիստական երկրներ Եվրամիության ընդլայնման վրա: Դժվար է պատկերացնել, թե ինչը կարող է Եվրամիությանը ստիպել նմանատիպ կոշտ դիրքորոշում գրավել Մոլդովայում և Վրաստանում առկա անջատողական հակամարտությունների լուծման հարցերում: Դա դեմ կլինի Եվրամիության գլխավոր անդամ երկրների վարած քաղաքականությանն ու տեսակետներին, որոնք համարում են, որ այսպիսի դիրքորոշումը չի բխում իրենց շահերից և դեմ են, որ Եվրամիությունն ամբողջովին սպառազինված լինի նման առաջադրանքի համար: Քանի որ Եվրամիությունն անբարյացակամ է վերաբերվում այս երկու երկրների ինտեգրման հարցին, այն ավելի շատ պատճառներ ունի չլուծված հակամարտություններին վերաբերվելու որպես եվրոպական փառամոլությանը դիպչող, քան միջամտել այս հակամարտությունները լուծելու ոչ խոստումնալի գործին:

Կա նաև մեկ այլ պատճառ, թե ինչու Եվրամիությունը, եթե նույնիսկ ցանկանա էլ, շատ քիչ շանսեր ունի ազդելու Վրաստանում և Մոլդովայում առկա հակամարտությունների ընթացքի վրա: Անջատողական միավորները մեծապես կախված են ռազմաքաղաքական հովանավոր երկրներից: Օրինակ, Հյուսիսային Կիպրոսը մեծապես կախված է Թուրքիայից: Այն փաստը, որ հովանավոր երկիր Թուրքիան ջանում է անդամակցել Եվրամիությանը, վերջինիս ընձեռում է բացառիկ լծակներ թուրք կիպրոսցիների և բանակցություններում նրանց դիրքորոշման նկատմամբ: Եվ հակառակը, Եվրամիությունը ոչ մի լծակ չունի մերձդնեստրյան ու արխազական վարչակարգերի ռազմաքաղաքական հովանավոր Ռուսաստանի վրա:

Այս իրավիճակը մեզ կանգնեցնում է «հակամարտության ձևափոխման» վերաբերյալ բավականին անորոշ մի հայեցակարգի առջև: Ինչպես վերը նշեցի, սա վերաբերում է հակամարտության նկատմամբ կողմերի վերաբերմունքի և գործելառճի փոփոխությանը, այնինչ այդ խնդիրները դեռ պետք է լուծվեն: Այստեղ Եվրամիությունն իր ազդեցությունը տարածելու շատ ավելի մեծ շանսեր ունի: Այդ ազդեցությանն ավելի շուտ կարելի է հասնել «սոցիալիզացիա» կոչվող սակավ հայտնի մեխանիզմների, քան պայմանականության գործուն և թիրախային քաղաքականության կիրառմամբ, որը չի շրջանցում նաև ոչ թեկնածու երկրները: Այնուամենայնիվ, այստեղ ամենագլխավոր խնդիրն այն չէ՝ արդյոք Եվրամիությունն ունի ազդեցություն, թե ոչ, այլ այն, թե ինչպես առանձնացնել Եվրամիության ներ-

դրումներն այն արտաքին մասնակիցներից, որոնց հավաքական կերպով անվանում են «միջազգային հանրություն» կամ «Արևմուտք»: Եվրոպայի ներկայացուցիչների և Միացյալ Նահանգների տեսակետները շատ խնդիրների շուրջ չեն համընկնում, սակայն երբ խոսքը վերաբերում է Վրաստանում և Մոլդովայում ստեղծված հակամարտությունների լուծմանը, դժվար թե հնարավոր լինի տեսնել նկատելի տարբերություններ: Արևմտյան գործիչները տարբերվում են իրենց ակտիվությամբ և ազդեցիկությամբ, սակայն տեղի գործիչներին ուղղած իրենց հաղորդագրությունը միատեսակ է:

Այդ հաղորդագրության մեջ ամենաառաջին և հիմնական կետն այն է, որ բռնությամբ նպատակներին հասնելն անօրինական է: Երկրի միասնությունը վերականգնելուն ուղղված ուժի կիրառման արգելքը և միաժամանակ տարածքային ամբողջականության սկզբունքների ֆորմալ հաստատումը «սառեցված հակամարտություններն» անորոշ ժամանակով պահպանելու հնարավորություն են ստեղծում՝ այնպիսի պայմաններում, երբ արտաքին կողմերը կա՛մ չեն ցանկանում, կա՛մ էլ ի վիճակի չեն իրենց լուծումը թելադրել հակամարտող կողմերին: Թվում է, թե հակամարտող կողմերը դեմ չեն ուժ կիրառելու արգելքին: Սակայն դրա պատճառը միայն այն չէ, որ նրանք վախենում են պատժամիջոցներից, այլ այն, որ առանց բռնության հակամարտություններին լուծում տալու կարևորությունը արդեն բավականաչափ միջազգայնացվել է հասարակական և քաղաքական վերնախավերի կողմից: Սա նշանակալի փոփոխություն է բռնությունն ընդունող, եթե ոչ՝ փառաբանող հերոսական ռոմանտիկ ազգայնականության ոգիների համար, որ Խորհրդային Միության կործանման ժամանակահատվածում գերակշռում էին այս հասարակություններում: Մարդկանց ոգիներն այսօր ավելի պրագմատիկ են, քան մոտ տասնհինգ տարի առաջ, և ավելի ու ավելի է ուժեղացել հակակրանքը բռնության նկատմամբ: Պակաս կարևոր չէ նաև այն, որ երկրները միջոցներ են ձեռնարկել ինքնաբուխ բռնությունները զսպելու կամ դրանցից խուսափելու համար:

Վրաստանի երկու «վարդերի հեղափոխությունների» պատմությունը\* (Թբիլիսիում և Բաթումում՝ 2003թ. նոյեմբերին և 2004թ. մայիսին) և նույնիսկ գրեթե վերջերս՝ 2004թ. Մայիս-օգոստոսին Հարավային Օսիայում ծավալված գործողությունները հիանալի լուսաբանում են այս խնդիրը: Երկու դեպքում էլ Վրաստանի քաղաքական վերնախավի նոր սերնդի առաջնորդ Միխայիլ Սահակաշվիլին, որը սկզբում հանդես էր գալիս որպես ընդդիմու-

---

\* *Ծանոթագրություն խմբագրի (Մ. Խ.)* - Աջարական ճգնաժամի նույնացումը Վրաստանում 2003թ. Նոյեմբերյան իրադարձությունների հետ քաղաքագիտական տեսանկյունից հարիր չէ: Աջարական հիմնախնդիրը վերաբերում է կենտրոն-մարզ լիազորությունների սահմանազատման խնդրին: Այլ հարց է, որ հեղինակը փորձում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ավելի «պատկերավոր» ներկայացնել երկրի գործող իշխանությունների հաջողությունները աջարական սցենարում:

թյան առաջնորդ, իսկ այնուհետև՝ Վրաստանի նախագահ, մեծ ռիսկի դիմելու ցանկություն հայտնեց: Բոլոր երեք դեպքերում էլ նա փորձում էր ուժի միջոցով պաշտոնանկ անել տեղի առաջնորդներին, որոնք ունեին իրենց դիրքորոշումը պաշտպանող զինված ջոկատներ: Բոլոր դեպքերում էլ նա խոստացավ իր նպատակներին հասնելու համար բռնությունների չդիմել: Սակայն անկախ նրա ճառերից, իրականում նրա ձեռնարկած գործողություններում ռիսկի մեծ գործոն կար: Այնուամենայնիվ, Թբիլիսիում և Բաթումում Սահակաշվիլու առաջնորդած ուժերն իրենց նպատակներին հասան առանց որևիցե զոհի: Հարավային Օսիայում հարավօսական անջատողական կառավարությանն իշխանությունից հեռացնելու փորձերը սակավ հաջողակ էին: Այստեղ Սահակաշվիլին չկարողացավ խուսափել ռազմական բախումներից և կորուստներ ունեցավ: Սակայն Սահակաշվիլու հարավօսական կամպանիայի ամբողջ տրամաբանությունը հանգեցնում է այն եզրակացության, որ նրա որդեգրած բռնությունների չկիրառման հռետորությունը միայն հռետորություն չէր, և որ ռազմական բախումներն ավելի շատ սխալ հաշվարկման և վատ կառավարման արդյունք էին, քան նրա ռազմավարության մի մասը: Հենց Սահակաշվիլին տեսավ, որ իր գործողություններն ուղղակիորեն տանում են ռազմական բախումների իր օս և ռուս հակառակորդների հետ, նա առաջին իսկ հնարավորության դեպքում օգտվեց սահմանափակ ռազմական հաջողությունից (այն բանից հետո, երբ վրացական ուժերը գրավեցին այն բարձունքը, որտեղից ուժակոծվում էին վրացական գյուղերը) և փաստորեն հետ քաշեց իր ուժերը հակամարտության շրջանից՝ վերջ դնելով ռազմական բախումների փուլին\*:

Այս փոփոխության համար կան մի քանի պատճառներ: Դրանք ամբողջապես հիմնված են բանականության վրա. հավանաբար վրացական վերնախավերը դասեր են քաղել 1990-ական թթ. սկզբներին տեղի ունեցած զինված հակամարտություններից, այսինքն՝ ռազմական բախումները Վրաստանի դեմ դուրս կբերեն ոչ միայն տեղի էթնիկ զինված ջոկատներին, այլ նաև, ի վերջո, ռուսական կառավարության ուժերին (նույնիսկ անուղղակի կերպով), և այսպիսի բախման արդյունքում այն հաղթանակ տանելու քիչ շանսեր ունի: Այնուամենայնիվ, միայն սա բավական չէ այս փոփոխությունը բացատրելու համար: Վիճահարույց է այն միտքը, թե 1992-1993թթ. արխազական պատերազմի ժամանակ Շևարդ-

\* (Մ. Խ.) - Մ. Սահակաշվիլին փորձեց աջարական սցենարը, որտեղ հիմնահարցը հաջողվեց կարգավորել զերազանցապես տեղեկատվական-հոգեբանական պատերազմի միջոցով, կիրառել նաև վրաց-հարավօսական հակամարտության պարագայում, ինչն, ըստ էության, ի սկզբանե հղի էր տապալմամբ: Վրաց-հարավօսական հակամարտության գոտում վրացական զորքերի կողմից Ջավայի բարձունքներում ձեռնարկված անհաջող ռազմական գործողությունները, որտեղ վրացական կողմը, ոչ պաշտոնական տվյալներով, տվեց ավելի քան 90 զոհ, ավելի շուտ հակառակ կողմի ներուժի թերագնահատման արդյունք էին, իսկ ռազմական գործողությունների դադարեցման նախաձեռնությունը՝ ավելի շուտ հարկադրված քայլ էր: Ամենայն հավանականությամբ, հաջողության դեպքում ռազմական գործողություններն անշուշտ կշարունակվեին:

նաձեն շատ կցանկանար խուսափել ռազմական ուժի գործադրումից, սակայն նա չկարողացավ, որովհետև բավականաչափ վերահսկողություն չունեք կիսակառավարական զինված ուժերի վրա, ինչպես նաև այդ ժամանակ հասարակության մեջ ամենուրեք տիրում էր բռնության ոգին: Մյուս կողմից, չնայած ստեղծված իրավիճակներում կողմնորոշվելու Միխայիլ Սահակյանի ճկունությունն ու ղեկավարելու վարպետությունն արժանի են գովասանքի, սակայն անհնար կլինեք խուսափել բռնություններից Թբիլիսիում և Բաթումում՝ բռնի իշխանափոխությամբ պայմանավորված բարձրոչակային միջավայրում, եթե Վրաստանի հասարակության մեջ բռնության վերաբերյալ տեղի չունենար խոր արմատական փոփոխություն: Այս փոփոխությունները կարելի է հասկանալ՝ հաշվի առնելով մի կողմից՝ հասարակության ձեռք բերած փորձը 1990-ական թթ., որը առաջ բերեց հասկանալի հակակրանք բռնության նկատմամբ, մյուս կողմից՝ Արևմուտքի հետ քաղաքական և սոցիալական կապերը: Ի տարբերություն Խորհրդային Միության կործանման ժամանակահատվածում տիրող համընդհանուր անորոշության, այժմ Հարավային Կովկասում գործում են անվտանգության մի շարք համակարգեր, որոնք կանխորոշում են Վրաստանի կախվածությունը Արևմուտքի քաղաքական և ֆինանսական աջակցությունից: Մա չի նշանակում, թե Վրաստանն ամեն հարցում հնազանդորեն հետևում է Արևմուտքի ցուցմունքներին, բայց նա հասկանում է, որ քաղաքական վեճերը կամ էթնոտարածքային հակամարտությունները լուծելիս՝ բռնությանը հավանություն տալու կողմնորոշումն ի ցույց դնելու դեպքում այն ստվեր կզցի Վրաստանի միջազգային հեղինակության վրա և ռիսկի կենթարկի հարաբերությունները Արևմուտքի ներկայացուցիչների հետ\*:

Համենայնդեպս, անարդարացի կլինեք ասել, որ եթե չլինեք միջազգային ճնշումը, Վրաստանը բռնությունների կղիմեր: Հակամարտություններին խաղաղ լուծում տալու մշակույթը, որ ասոցիացվում է Եվրոպայի հետ (որպես հոմանիշ Վրաստանում օգտագործում են «Արևմուտք» կամ «քաղաքակիրթ աշխարհ» բառերը), յուրացվել է վրաց հասարակության գոնե մի քանի շատ կարևոր հատվածներում:

Արևմտյան հաղորդագրության երկրորդ չափազանց կարևոր կետը ազդեցիկ և բացառապես էթնիկ ազգայնականության ապալեզգիտմացումն է: Կարևոր փոփոխություններ են

---

\* (Օ. Լ.) - Վրաստանի ղեկավարությունն իր արտաքին ու ներքին խնդիրները հիմնականում պայմանավորում է Արևմուտքի հետ: Վրաստանի կարևորագույն խնդիրների լուծման ու որոշումների ընդունման նիստերին մասնակից է լինում նաև Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլսը: ՆԱՏՕ-ին ինտեգրումը այսօր Վրաստանի արտաքին քաղաքականության գլխավոր գերակայություններից մեկն է, եթե ոչ ամենագլխավորը: Վերլուծաբաններից շատերն են կիսում այն տեսակետը, որ գնալով ավելի է մեծանում Վրաստանի մերձեցումն Արևմուտքի հետ՝ հատկապես ռուս-վրացական հարաբերությունների սրացման համատեքստում: Ըստ էության, գլխավոր հարցն այն է, թե ի շահ Վրաստանի Վաշինգտոնում ինչքան են պատրաստ վատացնել իրենց հարաբերությունները Ռուսաստանի հետ:

նկատվում նաև այս հարցում: Էթնիկ ազգայնականությունը Վրաստանի հասարակության և քաղաքականության մեջ շարունակում է մնալ կարող ուժ՝ ինչպես Արևմտյան Եվրոպայի հասարակությունում և քաղաքականությունում: Այդ դեպքում էլ ինչ քաղաքականորեն ճիշտ դատողություն կարող է լինել: Այստեղ տարբերություններն ավելի շատ քաղաքական կառույցների դիրքի և կառուցվածքի մեջ են: Փոխվել է այն, որ էթնիկ ազգայնականությունը դադարել է գերակշռող քաղաքական դատողություն լինելուց: Այս փոփոխությունն արդեն նկատելի էր Շևարձնաձեի իշխանության ժամանակ, որի կողմնակիցները դատապարտում էին նրա նախորդի՝ Զվիադ Գամսախուրդիայի վարած քաղաքականությունն ու «ֆաշիստական նեղ» գաղափարները: Սակայն այս դեպքում կարելի էր պնդել, որ Շևարձնաձեն ներկայացնում էր նախկին կոմունիստական նոմենկլատուրան և այս փոփոխությունն ավելի շատ իրականացվել էր կոմունիստական-ինտերնացիոնալիստական պայմաններում, քան արևմտյան ժողովրդավարական միջավայրում սոցիալիզացված մարդկանց կողմից: Սահակաշվիլին ներկայացնում է մի նոր սերունդ, որը կոմունիզմից հետո մասամբ էր սոցիալիզացված, սակայն հիմնականում պահպանել էր ագրեսիվ հակակոմունիստական հայացքները: Սահակաշվիլին նույնպես ստեղծեց ազգային և պետական միասնություն և իր հայտարարած գերակայությունների համաձայն՝ քաղաքական ազգայնականության ավանդական արժեքներ: Սակայն էթնոտարածքային խնդիրները լուծելու նրա մոտեցումներն ու գաղափարախոսությունը շատ են տարբերվում 1990-ական թթ. բնորոշ մոտեցումներից:

Սա հատկապես ակնհայտ է Հարավային Օսիայի հակամարտության պարագայում: 1989-1992թթ. ծագած հակամարտության արդյունքում օսերը ձեռք բերեցին թշնամական էթնիկ խմբի հեղինակություն: Ըստ այդ տրամաբանության՝ Վրաստանի տարածքից հագարավոր օսեր են վտարվել, որոնք ընդհանրապես ոչ մի կապ չունեին հակամարտության հետ: Երբևէ չի քննարկվել այն հարցը, որ տարածաշրջանի խնդիրներին լուծում գտնելու ժամանակ պետք էր նաև հաշվի առնել հարավօսական ժողովրդին: Հարավային Օսիայի ինքնավար կարգավիճակը չեղյալ է համարվել<sup>1</sup>: Սահակաշվիլին կոնկրետ քայլեր ձեռնարկեց այս իրավիճակը շտկելու համար: Նա հայտարարեց, որ սխալ էր ինքնավարությունը չեղյալ համարելը<sup>2</sup>. նա քայլեր ձեռնարկեց 1990-1991թթ. արտաքսված օս բնակչությանը Վրաստան հետ ընդունելու ուղղությամբ (Շևարձնաձեի կառավարությունն այս

<sup>1</sup> Ճիշտն ասած՝ վրացական խորհրդարանը դա արել է՝ ի դժգոհություն հարավօսական խորհրդարանի, որը Հարավային Օսիան հռչակեց ինքնիշխան հանրապետություն՝ առանց հաշվի առնելու, որ այն նաև Վրաստանի մի մասն է: Այնուամենայնիվ, սա չի արդարացնում Վրաստանի խորհրդարանի որոշումը:

<sup>2</sup> Վրաստանի ղեկավարն ասում է, որ դա «սխալ է, որպեսզի վերջ դնի առանձնացած շրջանների ինքնավարությանը», *ITAP-TACC*, Վրաստան, հունիսի 12 (2004թ. - Մ. Ե.):

խնդիրն օգտագործում էր որպես առտրի միջոց Հարավային Օսիայի հետ բանակցություններում): Նա հակամարտության լուծմանը վերաբերող հարցերում բարձր պաշտոնների նշանակեց Վրաստանի էթնիկ օս փախստականներին: Նա փորձեց կրկին վերահսկողություն սահմանել Հարավային Օսիայի վրա՝ աշխատելով շահել օս ժողովրդի համակրանքը՝ տարածելով օսական լեզուն, թոշակներ վճարելով օս բնակիչներին, խրախուսելով ժողովուրդների միջև բարեկամությունը և աջակցելով տարբեր բարեգործական ձեռնարկներին: Քաղաքական հիմնական գաղափարախոսությունն ավելի շուտ պետք է լինի ողջունել «մեր օս հայրենակիցների» վերադարձը Վրաստան, քան հետ գրավել նրանց զբաղեցրած տարածքը\*։ Այս քաղաքական գաղափարախոսությունը հիմնված է այն ընկալման վրա, որ կարգավորման յուրաքանչյուր բանաձև պետք է ընդունելի լինի մյուս կողմի համար: Հարավօսական հակամարտության վերջին սրացումները ստվեր գցեցին այս փոփոխությունների վրա, սակայն սկզբնապես նրանք արդեն սահմանել էին ռազմավարության առանցքը: Սահակաշվիլուն կարող են քննադատել խնդիրը չափազանց պարզ ներկայացնելու կամ ընդհանրապես Հարավային Օսիայի կամպանիայում անհաջողության մատնվելու համար: Սակայն նրանց վերաբերմունքի և վարքագծի փոփոխությունն ակնհայտ է:

Հակամարտության վերաբերյալ վրաց հասարակության մեջ առկա բազմակարծության բարձր մակարդակը նույնպես պետք է վերագրել տարածաշրջանում արևմտյան սոցիալիզացիային: Դա կապված է էթնիկ ազգայնականության ապալեզիտիմացման հետ: Ավանդական էթնիկ ազգայնականությանն անհրաժեշտ է, որպեսզի հակամարտ կողմերի միջև ամուր փոխհամաձայնություն տիրի. յուրաքանչյուր ոք պետք է մեր հակառակորդին վերաբերվի այնպես, ինչպես նա արժանի է և կիսի բոլոր անհրաժեշտ միջոցներով հաղթանակի հասնելու որոշումը: Այլադավանները դավաճաններ են. կա՛մ մեզ հետ էք, կա՛մ էլ՝ ընդդեմ մեզ: Այս մոտեցումը քիչ թե շատ բնական է պատերազմի մեջ գտնվող հասարակության համար: Բայց այն նաև դեմ է ժողովրդավարական ժամանակակից հասարակության արժեքներին. նույնիսկ պատերազմական վիճակը չի արդարացնում տարբեր տեսակետների ֆորմալ կամ ոչ ֆորմալ արգելքը: Սա ժողովրդավարական հասարակությունը ոչ ժողովրդավարականից տարբերելու լավագույն միջոցն է:

1990-ական թթ. սկզբին հակամարտության լուծման հարցերում վրաց հասարակությունը հանդուրժող էր միայն մարտավարական տարաձայնությունների նկատմամբ: Այդպես էլ չքննարկվեց ոչ մի հիմնահարց: Հասարակության մի մասը վճռական համաձայնու-

---

\* (Շ. Խ.) - Պաշտոնական Թբիլիսիի ձեռնարկած նմանատիպ քայլերը ոչ թե ուղղված էին երկու՝ վրաց և օս, ժողովուրդների միջև վստահության վերականգնմանը, այլ, ըստ ամենայնի, տեղեկատվական-հոգեբանական տեխնոլոգիաների կիրառման հերթական փորձ էին:

թյան չեկավ ոչ թե այն պատճառով, որ տարված էր էթնիկ ազգայնականացմամբ ու դրա մեթոդներով, այլ որովհետև հավատարիմ էր մնում դավադրության տեսությանը: Օրինակ՝ պաշտոնանկ արված նախագահ Գամսախուրդիայի հետևորդները հանդես եկան արխագական պատերազմի դեմ, սակայն նրանք արդարացրին այն՝ ասելով, որ Մոսկվայից եկած գաղտնի հրամանների համաձայն, Շևարդնաձեն սկսեց պատերազմը, որպեսզի Ռուսաստանին հնարավորություն տա արդարացնելու վրացիներից Աբխազիան մաքրելը և Աբխազիայի նկատմամբ ռազմական վերահսկողություն սահմանելը:

Չափազանցություն կլինի ասել, որ ներկայումս Վրաստանում հասարակությունն ակտիվ քննարկում է Աբխազիայի հարցին լուծում տալու խնդիրները: Ընդհակառակը, հիմնական պատճառներից մեկն այն է, որ «սառեցված հակամարտության» պայմաններում հասարակությունը պարզապես չակերտավորել է այս խնդիրը և փոխանցել է, որպեսզի «միջազգային հանրությունը» լուծի այն: Հնարավոր է, որ հակամարտությունը քննարկման չի ենթարկվել, որովհետև ոչ ոք չգիտեր ինչպես լուծել այն: Մինչդեռ երիտասարդ քաղաքական գործիչների մի խումբ, հասարակական կազմակերպությունները (ՀԿ) և լրատվամիջոցների մի մասը, որ կազմում են նոր քաղաքական վերնախավի միջուկը, փորձեցին այս խնդրի նոր լուծումներ տեսնել: Բազմակարծության այդպիսի մակարդակը, անշուշտ, բավական չէ ժողովրդավարական հասարակության համար, սակայն ազգայնական ամուր փոխհամաձայնությունը նույնպես ջախջախված է:

Այս փոփոխություններին տանող ազդեցություններից ոչ մեկը բնորոշ չէ Եվրոպային կամ Եվրամիությանը՝ որպես հաստատության: Այս ամենը արևմտյան ազատական-ժողովրդավարական փոխհամաձայնության արդյունք է: Քանի դեռ Վրաստանը Եվրամիության ապագա անդամության հարցը դնում է իր օրակարգի առաջին տեղում, Եվրամիությունը կարող է ավելի մեծ իշխանություն ունենալ Վրաստանի հետագա գործողությունների վրա, քան այլոք: Սակայն քանի որ Եվրամիությունը չի ցանկանում չափազանց շատ խրախուսել Վրաստանի դեպի Եվրոպա ձգտումը, դժվար թե այն առանձնապես մեծ ազդեցություն ունենա հակամարտության հարցում Վրաստանի կատարած քայլերի վրա:

Եվրոպան կարող է լուրջ ազդեցություն ունենալ այն մտեցումների վրա, որոնք առնչվում են երկրների ինքնիշխանությանը: Տեսականորեն նույնիսկ Եվրամիության անդամությանը ձգտելու միակողմանի որոշումը նսեմացնում է ազգային ինքնիշխանության գաղափարի ավանդական չափանիշները, և սա պետք է որ քաջալերի բազմամակարդակ դաշնային հաստատությունների համատեքստում լուծումների փնտրտուքը: Ինչպես նշված է քննարկված գրքում, Եվրամիության գաղափարն է՝ ավելի շուտ հանդես գալ որպես միջավայր, քան միջոց: Այնուամենայնիվ, ոչ մի բանից չի երևում, որ այս իմաստով



Եվրոպականացման գաղափարը լուրջ ազդեցություն է ունեցել հակամարտ կողմերի դիրքորոշումների վրա: Եվրոպական քաղաքական հետազոտությունների կենտրոնի (*Center for European Policy Studies, CEPS*) առաջարկած Կովկասյան կայունության պակտում (*Caucasus Stability Pact*)<sup>1</sup> առաջադրված գաղափարները հիմնված էին հետևյալ փիլիսոփայության վրա. առաջարկվում էր Հարավային Կովկասի սահմաններում ստեղծել բազմամակարդակ դաշնային համակարգ, որը հավանության կարժանանա ազդեցիկ բոլոր արտաքին ուժերի կողմից: Առաջարկված մոդելի մասին տարածաշրջանում ունկնդրեցին քաղաքավարությունից ելնելով, քանի որ այն արտահայտում էր եվրոպացիների որոշ շահեր, սակայն մոտ ապագայում այն չէր կարող ունենալ գործնական արժեք: Կիպրոսի օրինակը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ այս «միջավայրը» չգործեց նույնիսկ այն ժամանակ, երբ երկու կողմերին էլ խոստացվել էին շոշափելի արդյունքներ կարճ ժամանակում: Թվում է, թե եվրոպական միջավայրն ավելի շատ կարող է օգնել Եվրամիության անդամ երկրների էթնիկ խմբերին ընդունել առկա դաշնային համակարգը, քան նորերը ստեղծելու համար դառնալ օգտակար մոդել:

Ինքնիշխանության հարաբերականության գաղափարը բացահայտորեն հակադրվում է երկիրը հզորացնելու տեղական օրակարգերին: Հարավկովկասյան բոլոր երկրները տառապում են պետության ոչ բավականաչափ հզոր լինելուց, հավանաբար՝ Վրաստանն ավելի շատ, քան մյուս երկու երկրները: Արդյունքում՝ երկրի հզորացումը կա և ապագայում էլ պետք է լինի կառավարությունների առաջնային խնդիրը: Սա լավագույն միջավայրը չէ այն հաղորդագրությունը տարածելու համար, թե ազգ-պետություններն այնքան էլ կարևոր չեն:

Ինչ կարելի է ասել այն ինքնահռչակ պետությունների մասին, որոնք վերափոխել են հակամարտության վերաբերյալ իրենց մոտեցումները և դրան համապատասխան՝ նաև գործունեության որակը: Կարելի է ասել, որ կան այսպիսի փոփոխության մի քանի նշաններ, սակայն դրանք շատ ավելի մեղմ են: Այս միավորները ճանաչված երկրներից տարբերվում են միայն նրանով, որ միջազգայնորեն կղզիացած են, թեև այս մեկուսացումը լիակատար չէ. փաստացի ինքնիշխանությունների առաջնորդները երբեմն շփվում են արևմտյան կառավարությունների ներկայացուցիչների հետ: Արևմտյան ՀԿ-ները, հիմնականում նրանք, որոնք մասնակցում են հակամարտության լուծմանը, տեղի հասարակու-

---

<sup>1</sup> Տե՛ս Մայքլ Էմերսոն և այլք, «Կայունության պակտ Կովկասի համար: Կովկասի գծով *CEPS* փորձագիտական խմբի խորհրդատվական փաստաթուղթ» (*Michael Emerson et al., A Stability Pact for the Caucasus. A Consultative Document of the CEPS Task Force on the Caucasus*), Brussels, Centre for European Policy Studies, *Ceps Working Documents No 145, 2000*, on the Internet on [http://shop.ceps.be/BookDetail.php?item\\_id=55](http://shop.ceps.be/BookDetail.php?item_id=55):

թյունների մեջ ստեղծել են համագործակցող կայուն խմբեր: Հատկապես Աբխազիայում քաղաքական հասարակության տեղի միջուկը զարգանում է Արևմուտքի, հաճախ նաև վրացական ՀԿ-ների հետ համագործակցելու ծրագրի շուրջ<sup>1</sup>: Այս հատվածը շատ փոքր է, սակայն, այնուամենայնիվ, ունի որոշակի ազդեցություն տեղի իրադարձությունների վրա: Հարավային Օսիան ներկայացնում է շատ ավելի փոքր և կղզիացած հասարակություն, քան Աբխազիան, և այս դեպքում շատ դժվար է խոսել քաղաքական հասարակության մթնոլորտի մասին:

Ինչևէ, այս դեպքում շատ դժվար է պնդել, թե շփումը Արևմուտքի հետ նպաստել է, որպեսզի հակամարտության վերաբերյալ փոխվեն ընդհանուր մոտեցումները: Քաղաքականորեն այս հասարակությունները ի դեմս Ռուսաստանի տեսնում են իրենց միակ քաղաքական պաշտպանին և կասկածամտությամբ են վերաբերվում «միջազգային հանրությանը» կամ «Արևմուտքին», որոնց նրանք համարում են Վրաստանի կողմնակիցը: Վրաստանի կողմից իր եվրոպական կամ եվրաստլանտյան կողմնորոշումների մասին հայտարարությունները միայն ավելի են ուժեղացնում այդ կասկածները: Այս հասարակություններն ու դրանց վերնախավերը (ՀԿ-ների փոքրիկ հատվածից բացի) արևմտյան գործելակերպին հետևելու ոչ մի պատճառ չունեն: Ավելին, ստեղծված քաղաքական վիճակը նրանց տանում է ոչ միայն ուղղակի Ռուսաստան, այլև դեպի Ռուսաստանում ձևավորված ամենահակաարևմտյան խմբավորումներ, ինչպիսիք են ռազմական և ռուսական ազգայնամոլ քաղաքական գործիչները:

Սա միակ գործոնը չէ: Ինքնահռչակ միավորների հասարակությունների համար անցյալում կատարված բռնություններն ավելի շատ կապված են հաղթանակի, քան պարտության հետ, և չնայած բոլոր զոհաբերություններին, նրանք ավելի քիչ պատճառներ ունեն այս փուլում իրենց կատարած գործողություններին քննադատորեն մոտենալու համար: Լինելով Վրաստանից փոքր միավորներ՝ նրանք ավելի հեշտ են իրենց ներկայացնում զոհի կարգավիճակում և այս հակամարտություններում պահպանում են բարոյականության բարձր չափանիշները. սա անգամ չի քաջալերվում նոր ուղիներ փնտրելով: Ստեղծված անօրինականության և մեկուսացման մթնոլորտը նպաստում է «պաշտպանական մտածելակերպի» զարգացմանը, որն, անշուշտ, բացասաբար է անդրադառնում բազմակարծության զարգացման վրա՝ հատկապես հակամարտության հարցում:

---

<sup>1</sup> Բրիտանական «Հաշտեցման միջոցներ» ՀԿ-ն (*NGO Conciliation Resources*) հատկապես ակտիվ է գտնվել այս հարցում: Նրանց ներկայացրած կովկասյան ծրագրին ծանոթանալու համար այցելեք նրանց համացանցային կայքէջը՝ <http://www.c-r.org/>:

Վերն ասվածից չպետք է հասկանալ, որ արխագական վերնախավը պակաս «եվրոպականացված» է, քան վրացականը: Խորհրդային Միության փլուզման ժամանակ արխագ վերնախավը պակաս արդիականացված չէր, քան վրացականը, և այդ իմաստով այն չէր կարող համարվել հասարակայնորեն կամ մշակույթով պակաս «արևմտամետ»: Արխագ վերնախավի առավել լուսավորված հատվածը, որոնք ամենայն հավանականությամբ կողջունեն Արևմուտքի այցելուներին, անկեղծորեն լավ են տրամադրված «եվրոպականացման» ծրագրի նկատմամբ և մեկ այլ քաղաքական իրավիճակում, անշուշտ, կլինեին վրացիներից ոչ պակաս արևմտամետ: Սակայն քաղաքական դիրքերն ավելի շատ պայմանավորված են հատուկ ուժերի հավասարակշռությամբ, քան մշակութային մոտեցմամբ<sup>1</sup>:

### ***Արևմտյան ազդեցությունը և «հեղափոխական անհամբերություն»***

Այն, որ Սահակաշվիլու՝ Հարավային Օսիայի խնդիրները կարգավորելու փորձերը վկայում են Վրաստանի «եվրոպականացված» լինելու մասին, բավականին վիճելի է շատերի համար: Ընդհակառակը, շատ արևմուտքցիներ՝ եվրոպացիներ ու ամերիկացիներ, խիստ մտահոգ են այդ կապակցությամբ: Սահակաշվիլին հաճախ նկարագրվում է որպես անկանխատեսելի առաջնորդ, որն ապակայունացրեց իրավիճակը Հարավային Օսիայում՝ առանց այն կարգավորելու հստակ ծրագրի: Չնայած նրա նպատակները համարվում են օրինական, արտասահմանյան խորհրդականները համոզված են, որ Վրաստանի կառավարությունը նախևառաջ պետք է կենտրոնանա քաղաքական և տնտեսական բարեփոխումների վրա և միայն ավելի ուշ օտերին ու արխագներին հրավիրի բարգավաճ և ժողովրդավարական Վրաստան:

Ինչ վերաբերում է 2004թ. սեպտեմբերին, ապա Սահակաշվիլու հարավօսական կամպանիան նրա կրած առաջին լուրջ անհաջողությունն էր: Այս անհաջողությունը հաճախ մեկնաբանվում է նրան բնորոշ «հեղափոխական անհամբերությամբ» կամ բարդ խնդիրների նկատմամբ պարզեցված վերաբերմունքով: Սակայն մինչ այս քննադատությունը արդարացնելը, ես պետք է պնդեմ, որ Սահակաշվիլու քայլերի հետևում կարելի է տեսնել

---

<sup>1</sup> Սա կարող է ներկայացվել սեփական արտաքին քաղաքական նախապատվությունների արխագական տեսանկյունից, ինչպես նկարագրել է Բրունո Կոպիետերսը (*Bruno Coppieters*) քննարկված գրքում: Մեկնաբանելով ռուսամետ կողմնորոշումը՝ Աբխազիան պնդում է, որ «Եվրասիային մի ընդհանուր հայացք գցելիս պետք է նաև հաշվի առնել, որ Ռուսաստանը նույնպես զերծ չի մնում եվրոպականացումից» (էջ 202): Այս տեսակետն ավելի շատ դիտվում է որպես ցանկալի կարծիք. արդիականացման ընդհանուր իմաստով Ռուսաստանը «եվրոպականացվում» է Պետրոս Մեծի ժամանակներից սկսած՝ 18-րդ դարի սկզբից, սակայն ավելի կոնկրետ քաղաքական իմաստով Ռուսաստանն ավելի շատ է հեռանում Եվրոպայից և Արևմուտքից: Բայց այս կարծիքը նաև լուսաբանում է, որ Աբխազիայի հասարակության գոնե մի մասը մտահոգ է ուժային քաղաքականությամբ առաջնորդվող իրենց երկրի կողմնորոշմամբ և սեփական եվրոպամետ կողմնորոշումների հակասությամբ:

լուրջ բանականություն: Այն մարտահրավեր է նետում «սառեցված հակամարտություններին» և դրանց լուծման ուղիների վերաբերյալ միջազգային հանրության խոհեմությանը, բայց միևնույն ժամանակ մերկացնում է իր թուլությունները: Համաձայն փոխհամաձայնությանը մոտ մի ծրագրի, նախևառաջ պետք է կայունացնել հետբախումնային հակամարտությունների արդյունքում ստեղծված իրավիճակը, կողմերը պետք է ավելի սառը դատեն, ապա հաջորդ փուլում պետք է ստեղծվեն փոխադարձ վստահություն ձեռք բերելու պայմաններ, ինչի արդյունքում տեղի կունենա «հակամարտության ձևափոխություն», կփոխվեն հակամարտող կողմերի մոտեցումները և միայն դրանից հետո, միջազգային հանրության հսկողության տակ, երկու կողմերի պատասխանատու խելացի ներկայացուցիչները կստորագրեն երկու կողմերի վերափոխված հանրությունների կողմից օրինականացված մի գործարք: Այս նախագծի իրականացմանը խոչնդոտող գործողությունները կհամարվեն խաղաղությանը չնպաստող, և այն իրականացնողները կհամարվեն «խոչընդոտողներ»:

Սա շատ հարմար ուտոպիա է, որը միջազգային (ժամանակակից եվրոպականը ներառյալ) փորձառությանը հակառակ է տանում: Ես կասկածի տակ չեմ դնում այն մարդկանց անկեղծությունն ու բարի նպատակները, որոնք հավատում են այսպիսի նախագծի, սակայն վերջինիս այսպես լայնորեն ընդունված լինելու հիմնական պատճառն այն է, որ նախագիծը հարմար է այն ուժերին, որոնց ձեռնտու է պահել *status quo*-ն, և այդ ուժերը կամ «միջոտողները» մեծամասնություն են կազմում այդ տարածաշրջաններում: Դա հարմար է «միջազգային հանրությանը», որին առանց այդ էլ մեծ գլխացավանք են պատճառում ընթացիկ «թեժ» հակամարտությունները: Ե՛վ ճանաչված, և՛ չճանաչված երկրների ղեկավարները, որոնք իրավիճակը փոփոխելու միջոցներ չունեն, ողջունում են դեմքը պահպանելու այդ ուղիները: Տեղի ազատական-առաջադիմական վերնախավը կարծում է, թե դա թույլ է տալիս իրենց հակադրվել իրենց երկրներում առկա էթնոազգայնական մոտեցումներին: Սա հիանալի հնարավորություն է ստեղծում հանցավոր և կոռումպացված շահեր հետապնդող բազմաթիվ անձանց համար, որոնք օգտվում են ստեղծված անօրինությունից՝ անորոշ արդարադատության քաղաքական «մութ անկյուններում»: Հետաքրքիր է, որ այս կոռումպացված ստվերային բիզնեսը ներգրավում է բոլոր կողմերին և ստեղծում է վստահության վրա կառուցված ամենաարդյունավետ մեխանիզմը:

Լինելով արևմտյան ոճով լավ սոցիալիզացված՝ վրացական նոր վերնախավերը հասկացան, որ այսպիսի մոտեցումների միակ պատճառն այն է, որ արդարացվի հակամարտություններն անորոշ ժամանակով սառեցված մակարդակի վրա պահելու փաստը: Եթե դա այդպես է, ապա լուծումն արագացնելու ամենալավ միջոցը ճգնաժամային վիճակ ստեղծելն է: Անշուշտ, ճգնաժամային վիճակը շատ մեծ ռիսկային գործոն է, շատ դժվար է

այն պահել ընդունելի սահմաններում և թույլ չտալ, որպեսզի վերածվի լայնածավալ բռնությունների: Այդպիսի ճգնաժամային վիճակ հրահրող անձը նաև դիմում է անձնական և քաղաքական մեծ ռիսկի, քանի որ նա ստիպված կլինի պատասխան տալ իրադարձությունների վատ ընթացքի դեպքում: Այնուամենայնիվ, ստեղծված ճգնաժամային իրավիճակը կարող է նոր հնարավորություններ ստեղծել և մասնակիցներին ստիպել անկեղծորեն փոխել իրենց դիրքորոշումը:

Հարավային Օսիայում կատարած իր քայլերում (նաև ուրիշ հարցերում) Սահակաշվիլին հավանաբար կրում էր արևմտյան/եվրոպական անուղղակի ազդեցությունը: Նոր կառավարությունը ցանկություն հայտնեց միանալ Եվրամիությանը և կրկնեց ՆԱՏՕ-ին անդամակցելու իր ցանկությունը, որը պաշտոնապես արտահայտվել էր Շևարդնաձեի կողմից: Ո՛չ ՆԱՏՕ-ին, ո՛չ էլ Եվրամիությանը չհուզեց այս հեռանկարը: Կարելի է վիճել, թե որն է այս դժկամության հիմնական պատճառը, սակայն առաջին պատճառը, որի մասին Վրաստանը կարող է լսել այս կազմակերպություններից, վերաբերում է չլուծված հակամարտություններին:

Այսպիսով, միջազգային հանրության հաղորդագրություններից մեկը սա է. «Առանց հակամարտությունները լուծելու չարժե անգամ մտածել ՆԱՏՕ-ին կամ Եվրամիությանը միանալու մասին», մյուսը՝ «Դուք պետք է այնպիսի դիրք բռնեք, որը բոլորին էլ հայտնի է, թե՛ հակամարտության լուծումը չի կարող երկարատև լինել»: Այս իմաստով Սահակաշվիլու պատրաստակամությունը՝ մեծ ռիսկի դիմել հակամարտությունները «ապաստանեցնելու» միջոցով, կարող է դիտվել որպես այս հաղորդագրությունների համակցության տրամաբանական պատասխան:

*Թարգմանությունը՝  
Մադլեն Եդիկյանի*